ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-2026/4237-1

ք. Երևան

«12» 05 2026թ.

«ՀՀ պետական պահպանության ծառայություն»-ը, այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս ՀՀ պետական պահպանության ծառայության պետ Ա. Գասպարյանի, որը գործում է Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքի և ՀՀ պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, և «Արմենիա Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ-ն, որը գործում է որպես Արմենիա Մարիոթ Հյուրանոց Երևան, ի դեմս ֆինանսական տնօրեն Ռիմմա Սերոբյանի, ով հանդիսանում է ընկերության գլխավոր տնօրեն Նիգոդոս Դ. Աթինիզյանի կողմից լիազորված անձ և գործում է 21.11.2025թ.-ին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, միասին այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջներին և չափանիշներին համապատասխան առաջարկել հյուրանոցային տեղավորման հնարավոր տարբերակներ, իսկ Պատվիրատուի գրավոր համաձայնության դեպքում՝ ապահովել համաձայնեցված հյուրանոցային համարների ամրագրումը և հյուրանոցային սպասարկման ծառայությունների մատուցումը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ մատուցված ծառայությունները և կատարել վճարում՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ամրագրման և ծառայությունների մատուցման պայմանները, այդ թվում՝ հյուրանոցի անվանումը, հասցեն, համարների քանակը, համարի տեսակը, հյուրերի քանակը, մուտքի և ելքի ամսաթվերը և ժամերը, ներառված ծառայությունները, ծառայության արժեքը, չեղարկման և փոփոխման պայմանները, սահմանվում են սույն պայմանագրի **N 3 հավելվածով** և/կամ Կողմերի միջև գրավոր համաձայնեցված այլ փաստաթղթով:

1.3. Ամրագրումը համարվում է համաձայնեցված միայն Կողմերի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

1.4. Առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության Կատարողը իրավունք չունի ամրագրումը համարել հաստատված, ներկայացնել վճարման պահանջ կամ հղում կատարել այն հանգամանքին, որ ամրագրումն իրականացված է:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Կատարողից պահանջել ամրագրման համար անհրաժեշտ ամբողջական, ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն,

2.1.2. ընդունել կամ մերժել Կատարողի կողմից ներկայացված տարբերակները մինչև գրավոր համաձայնության տրամադրումը,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված կարգով պահանջել փոփոխել համաձայնեցված ամրագրման

պայմանները,
2.1.4. չընդունել պայմանագրի պայմաններին չհամապատասխանող ծառայությունը,
2.1.5. սույն պայմանագրով նախատեսված դեպքերում պահանջել վերադարձնել վճարված գումարը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. ժամանակին Կատարողին տրամադրել ամրագրման համար անհրաժեշտ տվյալները և պայմանները,
2.2.2. գրավոր ձևով տեղեկացնել ներկայացված տարբերակի ընդունման, մերժման կամ փոփոխման վերաբերյալ,
2.2.3. կատարել վճարում միայն գրավոր համաձայնեցված և պատշաճ մատուցված ծառայությունների դիմաց, եթե Կողմերի միջև գրավոր այլ պայմանավորվածություն նախատեսված չէ:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից ստանալ ծառայության պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ տեղեկություններ,
2.3.2. պահանջել վճարում միայն գրավոր համաձայնեցված և պատշաճ մատուցված ծառայությունների դիմաց,
2.3.3. ներկայացնել համարժեք կամ ավելի բարենպաստ այլընտրանքային տարբերակ, եթե նախընտրելի տարբերակը հասանելի չէ:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պատվիրատուի ներկայացրած չափանիշների հիման վրա գրավոր առաջարկել հնարավոր տարբերակները,
2.4.2. Պատվիրատուի գրավոր համաձայնությունից հետո ապահովել ամրագրումը համաձայնեցված պայմաններով,
2.4.3. Պատվիրատուին տրամադրել ամրագրման գրավոր հաստատում,
2.4.4. առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության չփոխել ամրագրման էական պայմանները,
2.4.5. համաձայնեցված տարբերակի անհնարինության դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Պատվիրատուին և առաջարկել միայն համարժեք կամ ավելի բարենպաստ այլընտրանք,
2.4.6. պահպանել Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկությունների, ինչպես նաև ամրագրված կամ արդեն իսկ ձեռք բերված հյուրանոցային համարների, ծառայությունների ծավալների, քանակների և դրանց վերաբերյալ այլ տվյալների գաղտնիությունը:

3. ԱՄՐԱԳՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ՉԵՂԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջների հիման վրա Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է գրավոր առաջարկ, որում նշվում են առնվազն՝

3.1.1. հյուրանոցի անվանումը և հասցեն,
3.1.2. համարի տեսակը և քանակը,
3.1.3. հյուրերի քանակը,
3.1.4. մուտքի և ելքի ամսաթվերը և ժամերը,
3.1.5. ներառված ծառայությունները,
3.1.6. մեկ օրվա և ընդհանուր արժեքը,
3.1.7. կանխավճարի առկայությունը և չափը, եթե այդպիսիք կիրառելի են,
3.1.8. չեղարկման և փոփոխման պայմանները,
3.1.9. կիրառված զեղչերը, եթե այդպիսիք առկա են:

3.2. Պատվիրատուի գրավոր համաձայնությունից հետո Կատարողը պարտավոր է տրամադրել ամրագրման գրավոր հաստատում:

3.3. Պատվիրատուն իրավունք ունի մինչև մուտքի օրը գրավոր դիմել Կատարողին՝ ամրագրման պայմանների փոփոխման պահանջով, ներառյալ՝

3.3.1. մուտքի և/կամ ելքի ամսաթվերի փոփոխություն,
3.3.2. համարների քանակի փոփոխություն,
3.3.3. համարի տեսակի փոփոխություն,
3.3.4. հյուրերի քանակի փոփոխություն,
3.3.5. լրացուցիչ ծառայությունների փոփոխություն:

3.4. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի փոփոխության պահանջը ստանալուց հետո ողջամիտ ժամկետում գրավոր հայտնել դրա կատարման հնարավորության, արժեքի հնարավոր փոփոխության և կիրառելի պայմանների մասին:

3.5. Եթե Պատվիրատուն մինչև 2026 թվականի ապրիլի 28-ը ներառյալ գրավոր չեղարկել է կամ չեղարկում է ամրագրումը, ապա չեղարկումն իրականացվում է առանց տույժի կամ տուգանքի: Կողմերը հաստատում են, որ նշված ամսաթիվը սահմանված է սույն պայմանագրի Հավելված N 3-ով և կիրառելի է՝ անկախ սույն պայմանագրի կնքման ամսաթվից:

3.6. Սույն պայմանագրի 3.5 կետով սահմանված ժամկետից ուշ չեղարկման դեպքում Կատարողը կարող է պահանջել միայն նախապես գրավոր համաձայնեցված չեղարկման վճարը:

3.7. Ուշ չեղարկման վճարը չի կարող գերազանցել մեկ գիշերվա արժեքը յուրաքանչյուր չեղարկված համարի համար, եթե Կողմերը գրավոր այլ չափ չեն համաձայնեցրել:

3.8. Եթե Կատարողը չի ապահովում գրավոր համաձայնեցված պայմաններով ամրագրումը կամ առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության փոփոխում է հյուրանոցը, համարի տեսակը, տեղաբաշխման պայմանները, գտնվելու վայրը կամ ներառված ծառայությունների ծավալը, ապա Պատվիրատուն իրավունք ունի՝

3.8.1. հրաժարվել ծառայությունից առանց որևէ տույժի կամ տուգանքի,
3.8.2. չընդունել ծառայությունը,
3.8.3. պահանջել արդեն վճարված գումարի ամբողջական վերադարձ:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ, ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ծառայությունը համարվում է պատշաճ մատուցված, եթե Կատարողը ապահովել է Պատվիրատուի կողմից գրավոր համաձայնեցված պայմաններին համապատասխան ամրագրումը և հյուրանոցային սպասարկումը:

4.2. Մատուցված ծառայության արդյունքն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ կամ փաստացի մատուցումը հավաստող այլ երկկողմ փաստաթղթով:

4.3. Եթե Պատվիրատուն հայտնաբերում է անհամապատասխանություն, նա իրավունք ունի ներկայացնել պատճառաբանված մերժում և պահանջել թերությունների վերացում կամ համապատասխան գումարի վերադարձ:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 1280000 (մեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

5.2. Վճարման ենթակա են միայն Պատվիրատուի կողմից գրավոր համաձայնեցված ծառայությունները:

5.3. Վճարումը կատարվում է՝
ա) ծառայության մատուցումից և ընդունումից հետո,
կամ
բ) մինչև ծառայության մատուցումը՝ կանխավճարով, որի չափը չի կարող գերազանցել ծառայության ընդհանուր արժեքի 25 (քսանհինգ) տոկոսը, իսկ մնացած մասը՝ ծառայության մատուցումից և ընդունումից հետո:
Կոնկրետ տարբերակը որոշվում է Կողմերի գրավոր համաձայնությամբ:

5.4. Եթե Կողմերը համաձայնել են կանխավճարի շուրջ, Կատարողը պարտավոր է դրա ստացումից հետո ապահովել ամրագրումը համաձայնեցված պայմաններով:

5.5. Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված վճարումները կատարել համապատասխան հիմք հանդիսացող փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կողմերի գրավոր համաձայնությամբ ավելի կարճ ժամկետ սահմանված չէ:

5.6. Ծառայության ծավալի նվազեցման, մասնակի չեղարկման կամ պայմանագրի լուծման դեպքում Կատարողը պարտավոր է վերադարձնել ավել վճարված գումարը առավելագույնը 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ նախապես գրավոր համաձայնեցված և կիրառելի չեղարկման վճարի:

5.7. Եթե ծառայությունը չի մատուցվել Կատարողի մեղքով կամ մատուցվել է պայմանագրի պայմանների խախտմամբ, Կատարողը պարտավոր է վերադարձնել ստացված գումարն ամբողջությամբ առավելագույնը 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

6.2. Եթե Կատարողը ժամանակին չի վերադարձնում վերադարձման ենթակա գումարը, ապա յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար կարող է հաշվարկվել տույժ՝ չվերադարձված գումարի 0.05 տոկոսի չափով:

6.3. Եթե Պատվիրատուն խախտում է վճարման ժամկետը, ապա յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար կարող է հաշվարկվել տույժ՝ չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ

7.1. Կողմերն ազատվում են պատասխանատվությունից սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

7.2. Անհաղթահարելի ուժ են համարվում երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական կամ արտակարգ դրությունը, զանգվածային անկարգությունները, պետական մարմինների ակտերը, գործադուլները, հաղորդակցության խափանումները և այլ արտակարգ հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.3. Անհաղթահարելի ուժի առաջացման մասին համապատասխան կողմը պարտավոր է անհապաղ գրավոր տեղեկացնել մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը: Սույն պայմանագրի դրույթները կիրառվում են նաև Կողմերի միջև մինչև դրա կնքումը էլեկտրոնային փոստով կամ այլ գրավոր եղանակով իրականացված այն համաձայնեցումների նկատմամբ, որոնք վերաբերում են սույն պայմանագրի առարկային և որոնցից հնարավոր է որոշել ամրագրման և վճարման էական պայմանները:

8.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

8.3. Կողմերի միջև էլեկտրոնային փոստով, այդ թվում՝ մինչև սույն պայմանագրի ստորագրումը, կամ այլ գրավոր եղանակով կատարված համաձայնեցումները, որոնցից հնարավոր է որոշել ամրագրման էական պայմանները, համարվում են գրավոր համաձայնեցումներ և ունեն ապացուցողական նշանակություն:

8.4. Սույն պայմանագրի անբաժանելի մասն են՝
8.4.1. N 1 հավելվածը՝ «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց»,
8.4.2. N 2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»,
8.4.3. N 3 հավելվածը՝ «Ամրագրման պայմաններ»,
8.4.4. Հանձնման-ընդունման արձանագրության ձևը:

8.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չհասնելու դեպքում՝ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

9. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱՅՔԱՐ

9.1. Պատվիրատուն ընդունում է, որ կատարողը, վերջինիս կառավարող ընկերությունը և (կամ) նրանց համապատասխան մասնաճյուղերը կարող են ենթարկվել, ինչպես նաև նրանցից կարող է պահանջվել պահպանել՝

9.1.1. Միացյալ Նահանգների «Արտասահմանում կոռուպցիոն գործողությունների դեմ պայքարի մասին» 1977 թվականի օրենքը, Միացյալ Թագավորության «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» 2010 թվականի օրենքը, և այլ նմանատիպ օրենքներ, որոնք արգելում են կաշառք առաջարկելը, տալը կամ ստանալը, կամ այլ ոչ պատշաճ վճարումները, և

9.1.2. Օրենքներ, որոնք արգելում են կատարողին գործարար հարաբերություններ վարել որոշակի անձանց, կազմակերպությունների կամ կառավարությունների հետ, կամ սահմանափակում են նման գործակցությունը՝ տնտեսական պատժամիջոցների, առևտրային պատժամիջոցների կամ առևտրային էմբարգոյի պատճառով, որոնք ժամանակ առ ժամանակ կիրառվում, վարչարարորեն կառավարվում կամ պարտադրվում են որևէ կառավարության, այդ թվում՝ ԱՄՆ Գանձապետարանի (ֆինանսների նախարարության) օտարերկրյա ակտիվների վերահսկողության վարչության և ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից (միասին՝ «Հակակոռուպցիոն և պատժամիջոցների վերաբերյալ օրենսդրություն»):

9.2. Պատվիրատուն ընդունում և համաձայնում է, որ կատարողը, վերջինիս կառավարող ընկերությունը և (կամ) նրանց համապատասխան մասնաճյուղերը, ի կատարումն Հակակոռուպցիոն և պատժամիջոցների վերաբերյալ օրենսդրության հետ կապված իրենց պարտավորությունների, կարող են ձեռնարկել ցանկացած և բոլոր գործողությունները, որոնք բացառապես իրենց հայեցողությամբ անհրաժեշտ են համարում Հակակոռուպցիոն և պատժամիջոցների վերաբերյալ օրենսդրության մշտական համապատասխանությունն ապահովելու համար, այդ թվում՝ առնվազն սույն Համաձայնագրի անհապաղ դադարեցում ծանուցմամբ և առանց պատասխանատվության:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ Ա. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ
«Արմենիա Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ամիրյան 1
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ 15700-23076820100
ՀՎՀՀ 02504956

Ֆին. տնօրեն Ռ. Մերոբյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
«12» 05 2026թ. կնքված
N ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	98391160/1	Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան հյուրանոցային համարների ամրագրման և հյուրանոցային սպասարկման ծառայությունների մատուցում, ներառյալ՝ հյուրանոցային տարբերակների առաջարկում, համաձայնեցված հյուրանոցային համարների ամրագրում, ամրագրման գրավոր հաստատման տրամադրում, կեցության կազմակերպում և N 3 հավելվածով կամ գրավոր համաձայնությամբ նախատեսված հարակից ծառայություններ	դրամ	1280000	1	ք. Երևան, Ամիրյան 1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կողմերի կողմից համաձայնեցված ծառայությունների ամբողջական մատուցումը, ըստ յուրաքանչյուր ամրագրման համար սահմանված մուտքի և ելքի ամսաթվերի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ՝ Ա. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ
«Արմենիա Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ամիրյան 1
[Ամերիաբանկ] ՓԲԸ
Հ/հ 15700-23076820100
ՀՎՀՀ 02504956

Ֆին. տնօրեն՝ Ռ. Մերոբյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
«12» 05 2026թ. կնքված
N ՊՊԾ-ՄԱ ԾՁԲ 2026/4137-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98391160/1	Հյուրանոցային համարների ամրագրման և հյուրանոցային սպասարկման ծառայություններ	-	-	-	-	1280000	1280000	1280000	1280000	1280000	1280000	1280000	1280000	1280000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ՝ Ա. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ
«Արմենիա Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ամիրյան 1
"Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/հ 15700-23076820100
ՀՎՀՀ 02504956

Ֆին. տնօրեն՝ Ռ. Մերոբյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
«12» 05 2026թ. կնքված
N 42371-1 ծածկագրով պայմանագրի

ԱՄՐԱԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հյուրանոցի անվանումը՝ Արմենիա Մարիոթ հյուրանոց Երևան

Հյուրանոցի հասցեն՝ Ամիրյան 1, 0010, ք. Երևան

Համարների քանակը՝ 4

Համարի տեսակը / տեսակները՝ Ստանդարդ

Հյուրերի քանակը՝ 2 անձ յուրաքանչյուր սենյակում

Մուտքի ամսաթիվը և ժամը՝ 2026 թվականի մայիսի 03, ժամը 15:00

Ելքի ամսաթիվը և ժամը՝ 2026 թվականի մայիսի 05, ժամը 12:00

Ներառված ծառայությունները՝ 24 ժամ գործող մարզասրահ, բացօթյա լողավազան: Նախաճաշը ներառված չէ:

Մեկ օրվա արժեքը՝ 160,000 ՀՀ դրամ մեկ սենյակի համար, ընդհանուր՝ 640,000 ՀՀ դրամ 4 սենյակի համար մեկ օրվա համար:

Ընդհանուր արժեքը՝ 1,280,000 ՀՀ դրամ՝ երկու գիշերվա համար:

Կանխավճար՝ կիրառելի չէ:

Կիրառված զեղչեր՝ առկա չեն:

Անվճար չեղարկման վերջնաժամկետը՝ մինչև 2026 թվականի ապրիլի 28-ը ներառյալ:

Ուշ չեղարկման դեպքում կիրառվող վճարը՝ համարի արժեքի 100%-ը:

Փոփոխության պայմանները՝ կիրառելի չեն:

Հատուկ պայմաններ՝ կիրառելի չեն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական պահպանության ծառայություն
ք. Երևան, Պոռշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

Պետ՝ Ա. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ
«Արմենիա Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ամիրյան 1
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ 15700-23076820100
ՀՎՀՀ 02504956

Ֆին. տնօրեն՝ Ռ. Սերոբյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 4
«12» 05 2026թ. կնքված
N 37-1 ծածկագրով պայմանագրի

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ____

ք. _____ «_» _____ 20 թ.

Սույնով «_____»-ը, ի դեմս _____, որը գործում է _____ հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, և «_____»-ը, ի դեմս _____, որը գործում է _____ հիման վրա, այսուհետ՝ Կատարող, արձանագրում են, որ N _____ «» _____ 20 թ. պայմանագրի շրջանակում Կատարողի կողմից մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

հ/հ	Ծառայության անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1					
2					
3					

Ընդհանուր արժեքը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ:

Պատվիրատուն հաստատում է, որ վերոնշյալ ծառայությունները՝

□ մատուցվել են պատշաճ և ամբողջությամբ,

կամ

□ մատուցվել են հետևյալ վերապահումներով՝ _____

Սույն արձանագրությունը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ